«Հաստատում եմ»
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր,
տեխն. գ. դ. պրոֆեսոր՝ _____ Ռ. Ռ. Սահակյան

«17» 09 2021 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՍՈՍԵ ՍԵՐԳԵՅԻ ԽԱՉԻԲԱԲՅԱՆԻ «ԱՎԱԶԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ» ԹԵՄԱՅՈՎ ԺԹ.00.03 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սոսե Սերգեյի Խաչիբաբյանի «Ավազանկարչությունը որպես կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանման միջոց» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 2, կայացած՝ 17.09.2021թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ.պ., հ.գ.թ. դոցենտ՝ Ն. Կոստանդյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Ա. Ղազարոսյանը, ասիստենտ՝ հ. գ. թ. Վ. Եղիազարյանը, դասախոսներ՝ Տ. Մալումյանը, Ա. Ստեփանյանը, Մ. Միքայելյանը, մ.գ.թ. դոցենտներ՝ Լ. Հարոյանը, Ս. Բեժանյանը, Զ. Գրիգորյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Հարությունյանը, Ք. Վիրաբյանը, ասիստենտներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը:

Վերափոխվող հասարակությունում ստեղծարարությունը շատ կարևոր զարգացման նախադրյալ է: Կրտսեր դպրոցական տարիքում այդ հատկանիշի ձևավորումը կնպաստի երեխայի արդյունավետ ինտեգրմանը և ինքնիրացմանը որպես հասարակության անդամ: Ատենախոսության թեմայի ընտրության արդիականությունը կայանում է նրանում, որ արագ տեմպերով զարգացող

աշխարհում խիստ պահանջված է կրտսեր դպրոցական տարիքում ստեղծարարության խթանումը, որի միջոցներից է ավազանկարչությունը:

Ատենախոսական աշխատանքը շարադրված է համակարգչային 147 էջերում, որը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, հետազոտության սահմանափակումներից, գործնական առաջարկներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև կից ներկայացվող հավելվածներից:

Ներածությունում ներկայացված է գիտական ապարատը՝ հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան, պաշտպանության ներկայացվող դրույթները, ինչպես նաև հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ «Ստեղծարարության էությունը, բովանդակությունը և խթանման ուղիները» վերնագրով գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

«Ստեղծարարությունը որպես ինտեգրալ, բազմագործոն հոգեբանական ֆենոմեն» ենթագլխում կատարված է ստեղծարարության, որպես հոգեբանական ֆենոմենի մանրամասն վերլուծությունը՝ ներառելով եզրույթի առաջացման պատմությունը ըստ ժամանակագրության և տարբեր գիտական ուղղությունների (հոգեվերլուծության, կոգնիտիվ, հումանիստական), ստեղծարարության կառուցվածքային բաղադրիչների նկարագրության, ըստ տարբեր հեղինակների (Ժ.Գոդֆրուա, Դ.Հալպերն, Յ.Պոնոմարյով): Հիմնվելով երևույթի վերաբերյալ կուտակված գիտական մեկնաբանությունների վրա՝ հեղինակը սահմանում է ստեղծարարությունը որպես անձի ամբողջական, բազմակողմանի և բազմագործոն առանձնահատկություն և գտնում, որ ստեղծագործական ներուժի ակտիվացում կարելի է ակնկալել առանձին բաղադրիչների վրա ազդեցությամբ:

«Մանկության շրջանում ստեղծարարության հիմնախնդիրը» վերնագրով ենթագլխում հեղինակը անդրադարձել է մանկությանը՝ որպես ստեղծարարության զարգացման համար խիստ նշանակալի շրջանի վերաբերյալ հոգեբանական գիտության մեջ եղած վերլուծություններին: Մանկական ստեղծարարության հիմնախնդրի քննարկման համար մեջբերված են Կ. Յունգի, Ա. Մասլոուի, Է. Ֆրոմի, Կ. Ռոջերսի, Ե. Իլյինի, Պ. Տորենսի գաղափարները: Վերջիններս գտնում են, որ դպրոցական ուսուցման սկիզբը և տարրական դասարանները ստեղծարարության համար ստեղծարարության անկման բեկումնային շրջան են համարվում, քանի որ

դպրոցը տրամադրելով պատրաստի գիտելիքներ սպանում է ստեղծագործական մտածելակերպը: Սակայն ենթագլխի վերջում հեղինակը սեփական կարծիքն է հայտնում ստեղծարարության՝ անձի էությունից անբաժանելի լինելու մասին և առաջ է քաշում ենթադրություն առ այն, որ համապատասխան պայմանների ապահովման շնորհիվ կրտսեր դպրոցական տարիքում հնարավոր է պահպանել անձի ստեղծագործական ներուժը և խթանել ստեղծարարությունը:

Ատենախոսության երկրորդ՝«Ավազանկարչության էությունը և դերը հոգեբանական զարգացնող աշխատանքում» վերնագրով գլուխը ևս բաղկացած է երկու ենթագլուխներից:

«Ավազով աշխատանքը՝ որպես արտթերապևտիկ միջամտության ձև» վերնագրով ենթագլխում հանգամանորեն նկարագրված է ավազաթերապիայի առաջացման պատմությունը, ավազաթերապիայի դերը հոգեախտորոշիչ և թերապևտիկ աշխատանքներում, մեթոդի զարգացման մեջ ներդրում ունեցած հեղինակների աշխատանքները: Հղում է կատարվել Դ. Կալֆի, Ա. Գուդվինի, Բ. Լաբովիցի, Տ. Զինկևիչ-Եվստիգնեևայի, Տ. Գրաբենկոյի աշխատություններին: Այնուհետև անցում է կատարվում ավազանկարչությանը, որպես այլափոխված ավազաթերապիայի ձևի հանգստացնող և զարգացնող նշանակությանը, զարգացման հեռանկարներին, հարակից ոլորտներում նրա կիրառելիությանը:

«Ավազանկարչության՝ ստեղծարարությունը խթանող առանձնահատկությունները» վերնագրով ենթագլուխը նվիրված է ավազանկարչության այն առանձնահակությունների առանձնացմանը, որոնք պայմանավորում են ստեղծարարության խթանման հնարավորությունը: Մեջբերվում են Կ. Յունգի գաղափարները և Ն. Ռոջերսի ստեղծագործական կապի տեսության հիմնադրույթները:

Ատենախոսության մեջ հատուկ հետաքրքրության է արժանի երրորդ՝ «Կրտսեր դպրոցականների ստեղծարարության խթանման գործընթացում ավազանկարչության դերի հետազոտության արդյունքները» գլուխը: Այն բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցից վերջինը իր հերթին տրոհված է յոթ բաժինների: Հեղինակի կողմից կազմվել է հետազոտության հայեցակարգային մոդելը, որում նկարագրված է, թե ստեղծարարության որ բաղադրիչի զարգացումն է խթանվում ավազանկարչության այս կամ այն առանձնահատկությամբ: Ներկայացված է նաև ազատ

ավազանկարչությունից և 20 հատուկ տեխնիկաներից բաղկացած հեղինակային ծրագիրը: Խոսվում է հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը պայմանավորող հանգամանքների, անցկացված ձևավորող գիտափորձի փուլերի, տրամաբանության և ընտրանքի մասին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 11 հոդվածներում:

Հետազոտության ծավալն ու որակը համապատասխանում են առաջադրված խնդիրներին: Հետազոտական աշխատանքի նկարագրությունն ու քայլերի տրամաբանությունը, առաջադրված խնդիրներին համարժեք հոգեբանական հետազոտման մեթոդների, մեթոդիկաների ընտրությունը, փորձարարական տվյալների որակական, քանակական, մաթեմատիկական վերլուծությունները կասկած չեն թողնում արդյունքների հավաստիության վերաբերյալ:

Ներկայացված աշխատանքը որակական առումով բարձր է գնահատվում շնորհիվ՝

- գիտական աղբյուրների մանրակրկիտ տեսական վերլուծության,
- տեսագործնական կիրառության նշանակության,
- հետազոտական մեթոդների և մեթոդիկաների հստակ համակարգի ընտրության:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ հեղինակը հետազոտության արդյունքում ցույց է տվել, որ աշխատանքի սահմաններում ստեղծարարության խթանման գործառական մոդելի հիման վրա կազմվել և իրականացվել է ավազանկարչության հեղինակային ծրագիր, որն ուղղված է կրտսեր դպրոցականների ստեղծարարության բաղադրիչների խթանմանը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարված գիտական աշխատանքը, նրա կարևորությունն ու տեսագործնական արժեքը, մշակած հեղինակային ծրագիրը՝ հարկ ենք համարում նշել նաև որոշ բացթողումներ.

1. Ցանկալի կլիներ, որ հետազոտության մեջ հաշվի առնվեր սեռի գործոնը:
2. Աշխատանքի գիտական արժեքը ավելի բարձր կլիներ, և ավազանկարչության տեսական վերլուծությունը ավելի ամբողջական, եթե բացատրվեին ավազանկարչության միջոցով ստեղծարարությունը խթանելու նեյրոֆիզիոլոգիական մեխանիզմները, որոնց մասին շատ հպանցիկ խոսվել է 3.1 բաժնում:

3. Հետազոտության արդյունքները ավելի համոզիչ կլինեին գիտափորձի կրկնակի անցկացման դեպքում
4. Աշխատանքի տեքստում հանդիպում են կրկնվող մտքեր, անավարտ նախադասություններ, օտարահունչ բառեր, օր. «ռադիկալ», «ինտեգրալ», «պրոդուկտ»:
5. Աշխատանքում կան լեզվական և տեխնիկական վրիպակներ, ինչին ևս պիտի ուշադրություն դարձնել:

Վերը նշվածը թույլ է տալիս մեզ կատարել հետևյալ ընդհանրացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը ու հետևությունների հիմնավորումը թույլ են տալիս համարել, որ Սոսե Սերգեյի Խաչիբաբյանի «Ավազանկարչությունը որպես կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանման միջոց» խորագրով ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը արժանի է գիտական աստիճանի հայցման:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ.պ.,
Հ. գ. թ., դոցենտ՝ _____ Ն. Ս. Կոստանդյան

Ն. Ս. Կոստանդյանի ստորագրությունը հաստատում եմ
ՎՊՀ-ի գիտ. քարտուղար,
Մ. գ. թ., դոցենտ՝ _____ Ս. Ս. Բեժանյան